ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հաշվետվություններ

Ամեն չորեքշաբթի ՀՀ ԳԱԱ ինստիտուտների եւ գիտական կենտրոնների տնօրենները ՀՀ ԳԱԱ նախագահությանն են ներկայացնում իրենց ինստիտուտների եւ կենտրոնների 2000-2001 թթ. գիտական եւ գիտակազմակերպչական գործունեության մասին հաշվետվություններ:

Հաշվետու տարում Մեխանիկայի ինստիտուտում բարձր գիտական մակարդակով կատարվել են տեսական եւ փորձարարական բնույթի հետազոտություններ առաձգականության մաթեմատիկական տեսության, պլաստիկության, սողքի եւ առաձգամածուցիկության տեսության, մագնիսաառաձգականության, դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի կոնտակտային եւ խառը եզրային խնդիրների, կոմպոզիցիոն նյութերի եւ կոնստրուկցիաների օպտիմալ նախագծման, գետնահողերի, հիմքերի եւ հիմնատակերի մեխանիկայի, հեղուկների, գազերի եւ խառնուրդների մեխանիկայի, ռոբոտոտեխնիկական համակարգերի եւ այլ ուղղություններով: Կատարված հետազոտությունների հիման վրա վերջին 5 տարում տպագրվել են 8 մենագրություններ եւ գիտական հոդվածների 3 ժողովածուներ: 2000-2001 թթ. ընթացքում ինստիտուտի գիտաշխատողների կողմից հրատարակվել են 142 գիտական հոդվածներ, որոնցից 53-ը՝ արտասահմանում:

Մեխանիկայի ինստիտուտը համագործակցության պայմանագրեր է կնքել Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Հունաստանի մի շարք գիտական կենտրոնների հետ: Ինստիտուտն ունի INTAS-ի գծով եվրոպական գիտական դրամաշնորհը: Այս տարի ներկայացվել են 3 նախագծեր՝ ՄԳՏԿ-ի դրամաշնորհ ստանալու համար:

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը վերջին 5 տարում կատարել է տնտեսպայմանագրային հիմունքներով աշխատանքներ հանրապետության «Այգ» եւ «Անի-Լեռ» ձեռնարկությունների, երկաթգծի վարչության, ՀՀ քաղաքաշինության նախարարության, Հայջրնախագիծ ինստիտուտի եւ «Ռենկո» շինարարական ֆիրմայի պատվերներով:

Նույն հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտում բարձր գիտական մակարդակով կատարվել են տեսական հիմնարար հետազոտություններ 9 գիտական թեմաների շրջանակներում, ժամանակակից մաթեմատիկայի հետեւյալ ուղղություններով՝ ֆունկցիաների մոտավորության տեսություն եւ կիրառություններ, իրական անալիզ, կոմպլեքս անալիզ, հավանականությունների տեսություն եւ մաթեմատիկական վիճակագրություն, դիֆերենցիալ եւ ինտեգրալ հավասարումներ եւ դրանց արդյունավետ թվային լուծման մեթոդներ:

Վերջին 2 տարում ինստիտուտի աշխատակիցների մասնակցությամբ հրատարակվել է 7 գիրք՝ 2 մենագրություն եւ դպրոցական 5 դասագիրք, տպագրվել է 80 գիտական հոդված, որից 50-ը՝ արտասահմանում:

Վերջին 5 տարում ինստիտուտը կազմակերպել է 5 միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցել են 150-ից ավելի արտասահմանցի մաթեմատիկոսներ:

Մաթեմատիկայի ինստիտուտի 2 երիտասարդ գիտնականներ ստացել են DAAD-ի դրամաշնորհը: Ինստիտուտն ունի նաեւ NFSAT-CRDF հիմնադրամի 1 դրամաշնորհ:

ՀՀ ԳԱԱ Գիտական տեղեկատվության եւ լրատվության կենտրոն